տարիքին: Իրականացված աշխատանքների արդյունքում կազմվել է սոցիալական պատմություն, գենոգրամ և էկոգրամ, անհատական միջամտության պլան:
Անհատական խորհրդատվությունները շահառու երեխաների հետ ուղղված են եղել նաև ընտանեկան և միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, սոցիալական հմտությունների, էթիկայի կանոնների յուրացմանը, ուշադրության, մտածողության և հույզերի կապի ընկալման կարողության զարգացմանը, դրական վարքի ամրապնդմանը, ինքնարտահայտմանը, ինքնաարժևորմանը, համագործակցային և ապրումակցման կարողությունների զարգացմանը, չբավարարված պահանջմունքների վերհանմանը, սեփական ցանկությունների վերաիմաստավորմանը, վախերի հաղթահարմանը, մոտիվացիոն մակարդակի բարելավմանը, ժամանակի պլանավորման, ներելու կարողության զարգացմանը:
Անհատական խորհրդատվությունների արդյունքում տեղի է ունեցել կարիքների վերագնահատում:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը անհատական խորհրդատատվություն է տրամադրել **29** շահառուի, որից **15** աղջիկ, **14** տղա:

Հաշվետու ժամանակահատվածում անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, գենոգրամի և էկոգրամի, սոցիալական պատմության, միջամտության պլանի կազմելուն: Անհատական խորհրդատվություն է տրամադրվել նաև հետևյալ ուղղություններով. միջանձնային կոնֆլիկտների կարգավորում, ինքնագնահատականի մակարդակի բարձրացում, ինքնաարտահայտման և ինքնավերլուծության մակարդակի բարձրացում, էթիկայի, զգուշության կանոնների իմացության մակարդակի բարձրացում, կոգնիտիվ ոլորտի զարգացում:
Խորհրդատվությունների ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները և վարժանքները.

- Անհատական զրույց
- Շեֆալի ցաբերիի այսբերգի մեթոդ
- Շեֆալի ցաբերիի ծառի մեթոդ
- Քարտերի համեմատություն:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը անհատական խորհրդատատվություն է տրամադրել **39** շահառուի, որից **16** աղջիկ, **19** տղա:

Հաշվետու ժամանակահտվածում իրականացվել է անհատական խորհրդատվություն շահառու երեխաների հետ ելնելով առկա խնդիրներից:
Անհատական խորհրդատվությունների ընթացքում իրականացվել է կենտրոն ընդգրկվող երեխաների հետ ծանոթացում, զրույցի ընթացքում դուրս է բերվել շահառուների առաջնային կարիքները, կազմվել է՝ գենոգրամ, էկոգրամ, թարմացվել է միջամտության պլանը, իրականցվել է շահառուի վերագնահատում:
Անհատական խորհրդատվությունները ուղղված են նաև՝

- կենտրոնում գործող կարգ ու կանոնի իրազեկմանը
- հուզական վիճակի կարգավորման
- նպատակադրման կարողության զարգացման
- կոնֆլիկտայնության նվազեցմանը
- շփման ոլորտի կարգավորմանը

**<u>Անհատական սոցիալական խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>**
Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել **78** ընտանիքի անդամների հետ: